

Հայաստանի Հանրապետության «Երևանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվ. հ. 168 հիմն. դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնական հաստատության տնօրենի 2023թ.-ի օգոստոսի 31-ի N----հրամանով

Հաստատված է

Դպրոցի տնօրեն՝ Գոհար Մելիք-Ստեփանյան



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ Հ.168  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴԴՐՈՑԻ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ



## ԳՈՐԾԱԾՎՈՂ ԶԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՊԿԼՄ - Պետական կառավարման լիազորված մարմին

ՈԲԴԱՊ - Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան

ՈԲԱԳՏ - Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնադաստիարակչական գծով տեղակալ

ՄԿԱԳՏ - Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ

ՂԱԿ - Հանրակրթական ուսումնական հաստատության՝ սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ

Մ/Մ - առարկայական մեթոդական միավորում

ԱԽ - աշակերտական խորհուրդ

ԾԽ–ծնողական խորհուրդ

ԿԽ– կառավարման խորհուրդ

ԱՌԴ - անհատական ուսուցման պլան

ԿԱՊԿ - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ՀՊԶ



## ՆԱԽԱԲԱՆ

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման հիմքում ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքում ամրագրված փոփոխություններն են, ՊՈԱԿ–ի օրինակելի կանոնադրության սահմանումները, տնօրենի կողմից կազմված դպրոցի զարգացման հնգամյա ծրագրի կատարողականի և ներքին գնահատման արդյունքները: Աշխատանքներին մասնակցել են դպրոցի բոլոր օղակները՝ ներկայացնելով առաջարկներ, կատարելով 2022–2023 ուստարվա աշխատանքների վերլուծություն:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին», «Կրթության մասին» օրենքներով և «Հանրակրթական պետական չափորոշչի ձևավորման և հաստատման» կարգով դպրոցը որդեգրել է ամրագրված սկզբունքները.

<https://www.irtek.am/views/act.aspx?tid=165241>

### Հոդված 4. Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:
2. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:
3. Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին:
4. Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:
5. Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

Յոդված 5. Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- 1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.
- 2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.
- 3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.
- 4) միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.
- 5) սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.
- 6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.
- 7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.
- 8) պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.
- 9) ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը:

(5-րդ հոդ. փոփ. 14.12.04 [ՅՕ-63-Ն](#) օրենքներ)

Յոդված 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

2. Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- 1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.
- 2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.
- 3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.
- 4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

### Յոդված 18. Հանրակրթությունը

1. Հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը:
2. Հանրակրթության հիմնական խնդիրներն են՝
  - 1) սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը.
  - 2) համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը.
  - 3) սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական գինպատրաստության համալիր ծրագիր իրականացնելը:
3. Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.
  - 1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ).
  - 2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ).
  - 3) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):
4. Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:
5. Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն

աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

## **ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:
2. Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշիչի նորմերի և դրույթների համաձայն:
3. Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:
4. Չափորոշիչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար:
5. Չափորոշիչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

### **II. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173741>

### **III. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

27. Դպրոցի կառավարման մարմիններն են՝

- 1) հիմնադիրը.
- 2) նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը, Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ լիազորված մարմին).
- 3) կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը.
- 4) գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը:

#### **IV. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

67. Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

#### **V. 2; 5; ԵՎ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ**

##### **ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒՄԸ.**

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հրապարակել է հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում 2023-2024 ուստարում ուսումնական գործընթացի կազմակերպման [ուղեցույց](#):

Հաստատությունը ուսպլանի պետական, դպրոցական և անհատական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ կազմում է տվյալ տարվա իր ուսումնական պլանը:

Վերոնշյալ դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի պահանջներին համապատասխան:

2-րդ, 5-րդ և 7-րդ, ինչպես նաև մյուս դասարաններում ուսումնական պարապմունքների սկսվելու, ավարտվելու, ինչպես նաև արձակուրդների ժամկետները սահմանվում են «Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» համաձայն:

2023-2024 ուսումնական տարվա 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանն ունի երեք՝ պետական, դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչ:

Պետական բաղադրիչը ներառում է՝ ըստ դասարանների պետական պարտադիր առարկայացանկը և առարկայացանկում ընդգրկված ուսումնական առարկաներին հատկացված պարտադիր նվազագույն ժամաքանակները:

Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսպլանի պետական բաղադրիչով և հաստատության կողմից սահմանված առարկաներին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է սովորողների նախասիրություններին, հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով: Դպրոցական բաղադրիչի ժամերը հատկացվում են՝ հաշվի առնելով տվյալ դասարանում առարկայի դասավանդման համար պահանջվող տարեկան անհրաժեշտ ժամաքանակը: 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ամբողջ ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

Անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամերը հատկացվում են հաստատության սահմանած ուսումնական խմբակներին և ուսումնական նախագծերին՝ համապատասխան կարգի պահանջներին համաձայն: Անհատական բաղադրիչի ժամերը հատկացվում են՝ հաշվի առնելով խմբակի կամ նախագծի իրականացման համար պահանջվող տարեկան

Ժամաքանակը: Անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամաքանակից ժամեր են հատկացվում «Առողջ ապրելակերպ» ուսումնական խմբակին (5-րդ և 7-րդ դասարաններ):

Հաստատության 7-րդ դասարանում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից (առարկաներից):

Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչով պարապմունքները կազմակերպվում են պետական և դպրոցական բաղադրիչների ժամաքանակի շրջանակում իրականացվող պարապմունքներից հետո: Անհատական բաղադրիչի ժամաքանակը հաստատությունը բաշխում է ըստ կրթական աստիճանների և 7-րդ դասարանից սկսած՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի կողմից իրականացվող առնվազն մեկ ուսումնական նախագծի ուղղվածությունն ու բովանդակությունը:

ԿԳՄՍ նախարարությունը հրապարակել է նաև Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ և ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում 2023-2024 ուստարում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ [ուղեցույց](#):

## VI ԳՆԱՀԱՏՈՒՄ

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760>

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

- 1) հայտորոշիչ գնահատում,
- 2) ձևավորող գնահատում,
- 3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հաստատությունները կարող են կիրառել գնահատման այլ համակարգ, որը համապատասխանեցվում է 10 միավորային սանդղակին:

10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները. սկսվում 1 միավորից և չունի անբավարար սանդղակ:



**2023-2024 ուստարում ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու, ուսման որակը բարձրացնելու նպատակաով կարևորում ենք հետևյալ կետերը:**

Նախորդ ուստարվա խմբակների մատյանները, ավարտական դասարանների սովորողների անձնական գործերը և պահպանման ենթակա բոլոր փաստաթղթերն ըստ կարգի արխիվացնել

1.Սահմանել հսկողություն էլեկտրոնային մատենավարությանը:

2.Հանձնարել ուսուցիչներին լրացուցիչ աշխատանք տանել թույլ և չառաջադիմող սովորողների հետ: Վերահսկել երկարօրյա խմբերի և խմբակների աշխատանքները:

3. Դեկավարել մ/մ աշխատանքները:

4.Պահպանել դասալսումների քանակը՝ շաբաթական միջինը 5 ժամ :

5.Դպրոցի դաստիարակչական աշխատանքներում շարունակաբար համագործակցել ծնողական խորհրդի հետ:

6.Ուշադրության կենտրոնում պահել աշակերտական ինքնավարության մարմինների աշխատանքները: /ԱԽ/

7.Ներքին վերահսկողության միջոցով կատարել սովորողների կարողունակությունների զարգացման դինամիկայի գնահատում:

8.Նպաստել մանկավարժական համակազմի ուսուցման ձևավորման հմտությունների զարգացմանը, մանկավարժական գիտական հետազոտական աշխատանքների իրականացմանը, կամավոր ատեստավորման և տարակարգի մասնակցությանը:

9.Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը, կազմակերպել դասղեկի ժամեր նվիրված հայ ինքնության ճանաչմանը, ՀՀ խորհրդանիշներին և Հայոց բանակին, հայկական մշակույթին, իրականացնել ճանաչողական դաս-էքսկուրսիաներ:

10.Մանկավարժական աշխատանքները իրականացնել պետական չափորոշիչներով առաջադրված խնդիրներին համապատասխան և նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

11.Խրախուսել առարկայական լավագույն նախագծեր ներկայացնող , առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում հաղթող սովորողներին, գիտաժողովներում զեկույցով հանդես եկող մանկավարժներին և աշակերտներին:

12.Դպրոցի կառավարմանը մասնակից դարձնել ծնողական և աշակերտական խորհուրդներին, այն դիտել, որպես քաղաքացիական հասարակության կառուցման հիմնաքար:

13. Վերահսկել նոր շրջանառվող դասագրքերով դպրոցի 2;5; և 7–րդ դասարաններում դասավանդման, 7–րդ դասարանում իրականացվող պարտադիր նախագծային, հետազոտական աշխատանքի գործընթացը:

## **Հ Ր Ա Մ Ա Ն – 27 հունիսի 2023**

**N 98-Ն**

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=180914>

### **1. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ, ՀԱՏՈՒԿ) ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ, ԱՎԱՐՏԵԼՈՒ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

1. 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված և հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) 1-12-րդ դասարաններում սկսվում են 2023 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2024 թվականի մայիսի 24-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա, մայիսի 25-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

### **2. 2023-2024 ուսումնական տարում՝**

1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2023 թվականի հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, ձմեռային՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 7-ը ներառյալ, գարնանային՝ 2024 թվականի մարտի 25-ից 31-ը ներառյալ:

2) Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023 թվականի հոկտեմբերի 16-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 21-ը ներառյալ, գարնանայինը՝ 2024 թվականի մարտի 18-ից 31-ը ներառյալ:

3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2023 թվականի հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից 2024 թվականի հունվարի 21-ը ներառյալ և գարնանայինը՝ 2024 թվականի մարտի 25-ից 31-ը ներառյալ:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), լիազոր մարմնի՝ այդ թվում Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար արձակուրդների ժամկետներում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ՝ Հաստատության հիմնավոր առաջարկությամբ: Լիազոր մարմինը (մարզպետը, Երևանի քաղաքապետը) նախատեսվող փոփոխություններն արձակուրդն սկսվելուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ գրավոր եղանակով համաձայնեցնում է Նախարարության հետ:

## **2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՏԱՐԱԲՆԵՐԸ՝ ԸՍՏ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ**

<b>ԴԱՍԱՐԱՆՆԵՐ</b>	<b>1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ</b>	<b>2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ</b>
1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆ	14 ՇԱԲԱԹ 1 ՕՐ	16 ՇԱԲԱԹ
2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ	15 ՇԱԲԱԹ 1 ՕՐ	17 ՇԱԲԱԹ
3-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ	15 ՇԱԲԱԹ 1 ՕՐ	19 ՇԱԲԱԹ



<b>1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆ</b>	<b>2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ</b>	<b>3-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ</b>
---------------------	---------------------	------------------------

• աշնանային արձակուրդ	16.10.2023 - 29.10.2023	23.10.2023 - 29.10.2023	23.10.2023 - 29.10.2023
• ձմեռային արձակուրդ	25.12.2023 - 21.01.2024	25.12.2023 - 21.01.2024	25.12.2023 - 07.01.2024
• գարնանային արձակուրդ	18.03.2024 - 31.03.2024	25.03.2024 - 31.03.2024	25.03.2024 - 31.03.2024

### **29. Չարգացնող, հատուկ մանկավարժական ժամաքանակի տնօրինման կարգ.**

1) Չարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներն անցկացվում են խմբային կամ անհատական պարապմունքների ձևով՝ ելևելով սովորողների կարիքներից: Պարապմունքներն ամրագրվում են դասացուցակում կամ առանձին կարգացուցակում: Անհատական պարապմունքների դեպքում զարգացնող, հատուկ մանկավարժական պարապմունքներին հատկացվող ժամաքանակը բաշխվում է շաբաթվա օրերի միջև՝ ամրագրվելով Հաստատության տնօրենի հրամանով հաստատված՝ դասացուցակին կից կարգացուցակում:

32. Հաստատության դասարանները կազմավորվում են «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրերի հրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի N 954-Ն որոշման համաձայն:

## 2023–2024 ուսումնական տարվա համար սահմանվում է.

### Ուստարվա նպատակը`

- Ապահովել սովորողների որակյալ կրթության հասանելիությունը
- Ձևավորել մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված անձ:
- Չարգացնել ապագա շրջանավարտի նկարագրին վերաբերող ռազմավարական դրույթները:
- Նպաստել 21–րդ դարի հմտությունների ձևավորմանը
- Աջակցել սովորողներին ինքնաճանաչման և ինքնակառավարվող ուսումնական ռազմավարություն մշակելու գործընթացում:
- Նպաստել սովորողների բազմակողմանի զարգացմանը և համամարդկային փորձին հաղորդակից դառնալու ձգտմանը:

### Ուստարվա հիմնախնդիրները`

1. Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում
2. Ուսումնական ծրագրերի կատարում
3. Ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմում
4. Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում
5. Մեթոդական կազմակերպչական աշխատանքների կանոնակարգում
6. Առարկայական մեթոդ միավորումների աշխատանքների ղեկավարում
7. Դասավանդման որակի վերահսկում
8. Սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման և կարողունակությունների ձևավորման վերահսկում
9. Ուսուցչի լավագույն աշխատանքի, դրական փորձի տարածում
10. Ուսուցիչներին իրազեկում մանկավարժական ոլորտում տեղ գտած նորությունների և փոփոխությունների մասին
11. Ամրապնդել ծնող-դպրոց համագործակցությունը` ապահովելով ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկատվությունը, նրանց մասնակցությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին և դպրոցի կառավարման գործընթացին:
12. Նոր չափորոշչային պահանջների համաձայն ապահովել մեղմ անցումը գնահատման նոր համակարգի:

13. 2023–2024 ուստարում 2,5, և 7–րդ դասարաններում շրջանառվող նոր դասագրքերի կիրառմամբ, հաստատված առարկայական ծրագրերի և վերջնարդյունքների արդյունավետ իրականացման ապահովում:

14. Հետևողական նպատակային ուսուցման պլանավորում դպրոցի I-IX դասարանների յուրաքանչյուր առարկայի և դասարանի համար՝ տվյալ դասարանի աշակերտական համակազմի առանձնահատկությունը հաշվի առնելով:

15. Ֆիզիկական միջավայրային հարմարեցումների բարելավում

16. Չարգացման առանձնահատկությամբ սովորողների ԱՌԴ–ում նշված խելամիտ հարմարեցումների հասանելիության ապահովումը

17. Սովորողների մեջ արթնացնել գիտատեխնիկական ուղղվածությամբ մոտիվացիա՝ «ԱՐՄԱԹ» լաբորատորիայի գործարկմամբ:

18. Առարկայական լաբորատորիաների միջոցով ապահովել սովորողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ փորձարարական մասը:

19. Խթանել սովորողների ընթերցասիրությունը «Zartnir» հ/կ –ի և «Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագրի շրջանակներում:

### **Ուստարվա հիմնական դաստիարակչական խնդիրները՝**

- Կազմակերպել բազմաբովանդակ միջոցառումներ՝
- Սովորողների մեջ համընդհանուր դաստիարակության / գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, քաղաքացիական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական, բնապահպանական, իրավական / զարգացման ուղղությամբ:
- Սովորողների մեջ ձևավորել դրական վերաբերմունք ուսման, կառուցողական հաղորդակցման, կենդանի բնության, սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ.
- Սովորողների մեջ ձևավորել խոսքի միջոցով համագործակցային փոխհարաբերություններ կառուցելու, իր և ուրիշների համար թիմով աշխատելու նպաստավոր մթնոլորտ ստեղծելու կարողություն.
- Սովորողների մեջ դաստիարակել ռազմական գիտելիքների կայուն պաշար կրող, մարտունակ և կարգապահ զինվոր:
- Շարունակել վերահսկողական աշխատանքները սովորողների հաճախելիությունը բարելավելու նպատակով:

Հանձնարարել տնօրենի տեղակալներին, դասղեկ–դասվարներին և մեթոդավորումներին՝ մշակել սույն ծրագրից բխող աշխատանքային ծրագիր, հետևողական աշխատանք տանել այն 2023–2024 ուստարվա ընթացքում իրագործելու համար:

## ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



**ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱԽՈՍՆ Է.**

**«Հայրենիք ստեղծելը հերոսություն է,  
հայրենիք շենացնելը՝ առաքիլություն»  
Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս**

**Դպրոցի անվանումը, համարը՝**

«Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաքիլի անվ. Երևանին հ.168 հիմնական դպրոց »  
ՊՈԱԿ

**Դպրոցի հասցեն՝** Բաշինջաղյան 1-ին նրբանցք

**Դպրոցի հեռախոսահամարը, Էլեկտրոնային հասցեն՝**

35-04-01, [yerevan168dproc@mail.ru](mailto:yerevan168dproc@mail.ru)

**Դպրոցի ինտերնետային կայքի հասցեն՝** <https://yerevan168.schoolsite.am>

Երանի հ.168 հիմնական դպրոցն իրականացնում է սովորողների միահերթ հաճախմամբ ուսուցում հնգօրյա շաբաթական ռեժիմով: Առաջին դասաժամն ազդարարվում է 08:30–ին: Մեկ ակադեմիական դասաժամի տևողությունը 45 րոպե է: Դպրոցական պարապմունքների և դասամիջոցների ժամանակացույցը, դասարանների կահավորումը կազմվել է հնարավորինս պահպանելով ԱՆ պահանջը՝ «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը՝ համաձայն հավելվածի:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989>

Հաստատության (դպրոցի) ուսուցման լեզուն գրական հայերենն է:

Հաստատությունն ուսումնական գործընթացն իրականացնում է առաջնորդվելով ՀՀ

ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերի, ՀՊՉ–ի պահանջների և ուսումնական պլանի ընդհանրական տարբերակի հիման վրա մշակված դպրոցի ուսպլանով, ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

Գնահատումն իրականացվում է կիրառելով սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

- 1) հայտորոշիչ գնահատում,
- 2) ձևավորող գնահատում,
- 3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)

2023–2024 ուստարում գործում է սովորողների ուսումնառության գնահատման 10 միավորային սանդղակ, բացառությամբ 1–ին և 2–րդ դասարանի սովորողների:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760>

Դպրոցի տնօրեն՝ Գոհար Մելիք–Ստեփանյան

ՈԻԱԳՏ՝ 1. Սվետլանա Աբրահամյան,  
2. Կարինա Մկրտչյան,  
3. Գայանե Մադաթյան

ՄԿԱԳՏ՝ 1. Անահիտ Մովսիսյան

ԴԱԿ՝ 1. Սիրանուշ Մախյան

ՏԱԳՏ՝ 1. Լիլիթ Կարապետյան

Զինղեկ՝ 1. Արմեն Մարգարյան

Հաշվապահ՝ 1. Էմմա Հայրապետյան

Գրադարանավար՝ 1. Սուսաննա Պողոսյան

Դպրոցի կոլեգիալ կառավարման առանձին խորհուրդը կազմված է 9/ինը/ անձից:

Դպրոցի բոլոր մանկավարժները ՄԽ–ի անդամ են:

Դպրոցն ունի ԾԽ և ԱԽ

**Ձևավորվել են 8 /ութ/ առարկայական մասնախմբեր՝ Մ/Մ**

1. Պատմահայագիտական / հայոց լեզու և գրականություն, հայրենագիտություն, հասարակություն և հասարակական գիտություններ/ – մ/մ նախագահ Յ. Խոստեկյան
2. Ռուսաց լեզու – մ/մ նախագահ Լ. Ստեփանյան
3. Օտար լեզու / անգլերեն և ֆրանսերեն / – մ/մ նախագահ Ն. Քամայյան
4. ԲՏԾ / /աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, բնագիտություն, բնություն, տեխնոլոգիա, շախմատ / – մ/մ նախագահ Ա. Վարդանյան
5. Մաթեմատիկա, ԹԳՅԳ և ինֆորմատիկա – մ/մ նախագահ Ա. Անդրեասյան
6. Արվեստ և արհեստ – մ/մ նախագահ Յ. Յայրապետյան
7. Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն – մ/մ նախագահ Ա. Մարգարյան
8. Տարրական կրթություն – մ/մ նախագահ Ա. Դարբինյան

Դպրոցը գործում է իրավաբանական անձի պետական գրանցման ՀՀ պետոռեգիստրի 03 Ա 058218–ի վկայականի համաձայն: Սովորողների առավելագույն լիցենզավորված թույլատրելի թիվը՝ 1392 սովորող:

2023–2024 ուստարում ձևավորվել են թվով 50 /հիսուն/ դասարաններ՝ սովորողների 28 /քսանութ/ թվաքանակի միջին խտությամբ:

**2023–2024 ուստարի**

Օգոստոս–Սեպտեմբեր ամիսներին աշխատանքի կազմակերպումը

	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՈՒ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ
	<p>ՊԿԼՄ–ի կողմից հանձնարարականների մասին իրազեկում և հասցեական համակարգում:</p> <p>Կատարել վերջնական դասաբաշխում և ուսպլանով նախատեսված դպրոցական բաղադրիչի բաշխում</p>	<p>Տևօրեն 2022–2023 ուստարի</p> <p>Տևօրեն, ՈԲԱԳՏ օգոստոս</p>	



1.	Դպրոցի նոր՝ 2023–2024 ուստարվա ուսումնական պլանի քննարկում և հաստատում	տնօրեն օգոստոս	
2.	<p>Դպրոցի 2023–2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:</p> <p>Դպրոցի տնօրենի տեղակալների պարտականությունների քննարկում և հաստատում, նոր ուստարվա հիմնախնդիրների քննարկում:</p>	օգոստոս	
3.	<p>Մանկավարժական կադրերի, մյուս աշխատողների ընտրություն և վերատեղաբաշխում</p> <p>Առաջին դասարանների կոմպլեկտավորում</p> <p>«Մաթեմատիկա» առարկայի խորացված ուսուցմամբ մեկ՝ 5<sup>ա</sup>-րդ դասարանի կոմպլեկտավորում: Անգլերեն լեզվով խորացված ուսուցմամբ մեկ՝ 5<sup>ե</sup> դասարանի կոմպլեկտավորում</p>	օգոստոս Տնօրեն Ուլլաս	
4.	Ուսուցչին աջակցող մենթորական կամավորության սկզբունքով ձևավորվող խմբի գործառույթների հստակեցում:	օգոստոս Տնօրեն Ուլլաս	
5.	Կոմպլեկտավորել դասարանները, նշանակել դասվար–դասղեկներ / հրամանագրել /	Տնօրեն օգոստոս	
6.	Կայուն դասացուցակի հաստատում, առարկայական մասնախմբերի շրջանում քննարկել և մասսայականացնել գնահատման հետ կապված	Տնօրեն Ուլլաս ՄՄ նախագահներ Սեպտեմբերի առաջին շաբաթ	

	փոփոխությունները		
7.	Աշխատակազմի հաստատում դպրոցի, ուսուցիչների առանձին օղակների համար: Յոգեբանամանկավարժական աջակցող թիմի մասնագետների, ուսուցիչների մասնագիտական զարգացման աջակցող մենթորական խմբի աշխատանքային ծրագրերի հաստատում:	Տնօրեն ՈԻԱԳՏ ՏԱԳՏ Մինչև սեպտեմբերի 10–ը	
8.	Դպրոցի գրադարանը հարստացնել մանկավարժական մեթոդական նոր գրականությամբ	Գրադարանավար ՄՄ նախագահներ	
9.	Դասագրքերի ֆոնդի վերանայում և ըստ անհրաժեշտության պակասի լրացում: Դպրոցական դասագրքերի բաշխում, նոր դասագրքերի ստացում:	օգոստոս Գրադարանավար Դասղեկներ Ըստ տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցի	
10	Ներքին կարգապահական կանոնների, այդ թվում աշխատողների և սովորողների վարքականոնների հիշեցում	Տնօրեն ՄԿԱԳՏ Մինչև սեպտեմբերի 5–ը	
11	Չաստատել աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու և քաղաքացիական պաշտպանության պլանները	Տնօրեն օգոստոս	
12	Կազմել և վարել դպրոցի ուսուցիչների հաճախումների և փոխարինած ժամերի հաշվառման մատյան	ՈԻԱԳՏ Օգոստոս 2023–2024 ուստարի	
13	Չատուկ հսկողություն սահմանել ուսուցիչ–սովորող, ուսուցիչ– ուսուցիչ, վարչակազմ–ուսուցիչ – մանկավարժական	Տնօրենություն մշտապես	

	աշխատողներ փոխհարաբերության մեջ միասնական, կանոնադրական պահանջների կատարմանը, չեզոքացնել բուլինգի դրսևորման նախանշանները՝ դրանք առաջանալու դեպքում:		
14	Կազմակերպել և իրականացնել ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթ	Տնօրեն Պատասխանատու Ըստ անհրաժեշտության տարվա ընթացքում	
15	Ուսուցիչներին ապահովել առարկայական ծրագրերով և մեթոդական գրականությամբ	ՈԲԱԳՏ Գրադարանավար օգոստոս	
16	Առարկայական մեթոդ միավորումների տարեկան հաշվետվության հիման վրա քննարկել անելիքները	Տնօրեն, ՈԲԱԳՏ, ՄՄ Նախագահներ, մանկավարժական մենթորական աջակցող թիմ  օգոստոս	
17	Մեթոդական միավորումների տարեկան պլանի քննարկում և հաստատում	Տնօրեն, ՈԲԱԳՏ, ՄՄ Նախագահներ Մինչև սեպտեմբերի 10-ը	
18	Տնօրենի տեղակալների աշխատանքային ծրագրերի քննարկում և հաստատում	Մինչև սեպտեմբերի 5-ը	
19	Ստուգել և հաստատել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն դպրոցի տնօրենին:	ՈԲԱԳՏ, ՄՄ Նախագահներ Օգոստոս  Մինչև սեպտեմբերի 15-ը	
20	Էլեկտրոնային փաստաթղթավարության համապատասխան էջերում և պատուհաններում դպրոցի կողմից օգոստոս-սեպտեմբեր ամիսներին պահանջվող աշխատանքների	Տնօրենություն	

<p>կատարման, Էլեկտրոնային մատյանի վարման վերահսկում Զանձնարարել Էլեկտրոնային մատյանը վարել պատասխանատու և պատշաճ ձևով.</p> <p>ա. թեմաները գրանցել ըստ թեմատիկ պլանի,</p> <p>բ. տնային աշխատանքները գրանցել բոլոր դասերի համար,</p> <p>գ. գնահատականները նշանակել ժամանակին,</p> <p>դ. սովորողների միավորային գնահատականները Էլեկտրոնային մատյան անցկացնել երեք օրվա ընթացքում:</p>		
--	--	--

Առաջնորդվել ԿՉՆԱԿ–ի կողմից տրամադրվող ուղեցույցով

[https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page\\_40.html](https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_40.html)

## Սեպտեմբեր

### Միջոցառում:

- 1) Գիտելիքի և դպրության օրվան:
- 2) ԶԶ Անկախության տոն:
- 3) Սեպտեմբերի 27-հերոսացած մեր տղաներ:

### 2. ՆՂՎ:

1. Ընթերցանության գնահատում 2-4-րդ դասարաններում:
2. Մնացորդային գիտելիքների ստուգում հանրահաշվից և երկրաչափությունից 9-րդ դասարաններում:

### 3 Մնացորդային գիտելիքների ստուգում հայոց լեզվից և գրականությունից 9-րդ դասարաններում:

#### 4. Դասամատյանների ստուգում:

- 1) 2;5;և 7–րդ դասարանների բոլոր դասավանդվող առարկաների թեմատիկ պլանի համապատասխանությունը դասամատյանում գրանցված դասերի թեմաներին:
- 2) 6–րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայի տնային աշխատանքի համապատասխանությունը օրվա դասի թեմային:
- 3) 5–րդ դասարանի «Բնություն» առարկայի էջում գնահատման գրանցումների առկայությունը:
- 4) 9–րդ դասարանի սովորողների բացակայություններ հաշվառման առկայությունը:
- 5) 7–րդ դասարանի բոլոր դասավանդվող առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների, ուսումնական նախագծերի առկայությունը:

#### 5. Ծնողական խորհրդի ձևավորում:

#### 6. Աշակերտական խորհրդի ձևավորում:

#### 7. Մեթոդիավորման նիստ:

##### Օրակարգ

1. Մեթոդիավորման նիստի օրակարգի հաստատում
2. Օրվա դասի պլաններին, ուսումնական նախագծերին ներկայացվող պահանջների հաստատում
3. Ուսումնական նախագծերի երաշխավորում
4. Առարկայական խմբակների երաշխավորում
5. ՆԴՎ արդյունքների քննարկում:

Ուսումնական տարվա արդյունքների ամփոփման և հաջորդ ուսումնական տարվա նախապատրաստության գործընթացի քայլեր

#### (օգոստոս - սեպտեմբեր)

#### ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

Աղբյուրը՝

- [Օրինակելի կանոնադրություն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի](#)
- [Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր հրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանագանկը և նկարագրերը](#)
- [Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր հրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգ](#)

- [Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ](#)
  - [Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունում բազմահամակազմ դասարանի կազմավորման կարգ](#)
- [«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրություն](#)

	Ամիսը, ամսաթիվը	Քայլը	Այլ տեղեկություններ
1	Օգոստոսի 20	Մանկավարժական խորհրդի նիստ	Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում օգոստոսի 20- 30-ի վերաքննությունների հանձնաժողովների և ժամանակացույցի վերաբերյալ
2	Օգոստոսի 20	Տնօրենի հրամանը վերաքննությունների հանձնաժողովների և ժամանակացույցի վերաբերյալ	Տնօրենի հրամանով, հիմք ընդունելով սովորողների <a href="#">փոխադրման և ավարտման կարգի</a> պահանջներն ու մանկավարժական խորհրդի որոշումը, հաստատվում են վերաքննությունների հանձնաժողովների կազմն ու դրանց ժամանակացույցը
3	Օգոստոսի 20	Սովորողի ծնողին տեղեկացնելը քննության մասին	Դասղեկը տեղեկացնում է սովորողի ծնողին առաջիկա քննության օրվա մասին
4	Օգոստոսի 21-23-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության մեթոդափավորման կողմից նախնական դասաբաշխման կատարում	Հանրակրթական ուսումնական հաստատության հաջորդ ուսումնական տարվա օրինակելի ուսումնական

			պլանների հիման վրա մեթոդափափոխումը նախնական դասաբաշխման
--	--	--	--

			հարցը կարող է քննարկել հունիսի երկրորդ կեսին մանկավարժական աշխատողների արձակուրդ գնալուց առաջ:
5	Օգոստոսի 21-30-ը	Վերաքննությունների անցկացում	Հիմք ընդունելով սովորողների փոխադրման և ավարտման կարգի պահանջներն ու տնօրենի հրամանով հաստատված քննությունների հանձնաժողովների կազմն ու դրանց ժամանակացույցը, անցկացվում են քննությունները:
6	Օգոստոսի 23-27-ը	Դասագրքերի բաշխում	Դասագրքերը բաշխվում են տնօրենի հրամանով՝ <a href="#">ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու ել հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգի պահանջներին</a> համապատասխան:
7	Օգոստոսի 21-25-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կողմից մեթոդափափոխումների ներկայացրած նախնական դասաբաշխման առաջարկի	Մանկավարժական խորհուրդն այս դեպքում որոշում է ընդունում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը որոշակի առարկայախմբերի հատկացնելու վերաբերյալ:

		քննարկում և որոշման կայացում	
8	Օգոստոսի 25-26-ը	Տվյալ առարկայախմբին տրված ժամաքանակի՝ որոշակի առարկաներին հատկացնելու հարցի քննարկում մեթոդավորման կողմից և համապատասխան առաջարկությամբ այն մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացում:  Մանկավարժական խորհրդի համապատասխան որոշման կայացում, ինչը հաստատվում է տնօրենի հրամանով	Մանկավարժական խորհրդի որոշման և տնօրենի համապատասխան հրամանով ձևակերպվում է հանրակրթական ուսումնական հաստատության առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանը:
9	Օգոստոսի 26-27-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում	Հաստատության ուսումնական պլանը <a href="#">մանկավարժական խորհրդի</a> ներկայացմամբ հաստատվում է տնօրենի հրամանով:
10	Օգոստոսի 27-28-ը	Նախորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական	Ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքներն



		<p>աշխատանքի արդյունքների ամփոփում՝ հիմք ընդունելով Ուսումնադաստիարակչական աշխատանքի տարեկան պլանը (ՈւԴԱԴ)</p> <p>Ներքին գնահատման հաշվետվության քննարկում մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5- ը</p>	<p>ամփոփվում են մանկավարժական խորհրդի նիստում:</p> <p><a href="#">Ներքին գնահատման</a></p> <p>հաշվետվությունը քննարկվում և ներկայացվում է ուսումնական հաստատության խորհրդին, մանկավարժական, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովվում դրա հրապարակումը տվյալ ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում), տեղական և (կամ) հանրապետական մամուլում, նախարարության պաշտոնական <a href="https://lib.armedu.am/">https://lib.armedu.am/</a> կայքում:</p>
11	Օգոստոսի 27	<p>Առաջիկա ուսումնական տարում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում</p>	<p>Բաշխումը կատարվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, Հանրակրթական ուսումնական հաստատության <a href="#">օրինակելի կանոնադրության</a>, Մանկավարժական աշխատողների <a href="#">պաշտոնների անվանագանկի և նկարագրերի</a> և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին ու Հաստատության զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան:</p>

12	Օգոստոսի 28-29-ը	Վերաքննություններ չհանձնած սովորողի ծնողի դիմումը	<p>Վերաքննությունների արդյունքում 1 կամ 2 (11-րդ դասարանում՝ 3) առարկայից 1-3 կամ 1-7 միավոր ստացած սովորողի ծնողը</p> <p>(օրինական ներկայացուցիչը) դիմում է տնօրենին այդ առարկայից(ներից) հաջորդ ուսումնական տարվա ընթացքում քննություն հանձնելու պայմանով սովորողին հաջորդ դասարան փոխադրելու համար:</p>
13	Օգոստոսի 30	Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, մանկխորհրդի քարտուղարի ընտրություն	<p>Մանկավարժական խորհրդի կազմը հաստատվում է տնօրենի հրամանով մեկ ուսումնական տարվա ժամկետով (տես՝ <a href="#">Օրինակելի կանոնադրություն, կետ 76, 77</a>):</p> <p>Հաստատվում է նաև մանկխորհրդի նիստերի</p>

			Ժամանակացույցը և նախատեսվող օրակարգը:
14	Օգոստոսի 30	Մեթոդմիավորման նախագահների և դասղեկների կազմի հաստատում	Տնօրենը հրամանով հաստատում և մանկավարժական խորհրդի նիստում ներկայացնում է մեթոդմիավորման նախագահների և դասղեկների անվանական

			կազմը:
15	Օգոստոսի 30	Վերաքննությունների արդյունքների ամփոփում	Վերաքննությունների արդյունքների հիման վրա մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու (9- րդ և 12-րդ դասարանների դեպքում՝ հիմնական կամ միջնակարգ դպրոցն ավարտելու), դասընթացը կրկնելու կամ հաստատությունից դուրս մնալու մասին: Մանկխորհրդի որոշումը հաստատվում է տնօրենի հրամանով: Այդ որոշումը հիմք է հանդիսանում հաջորդ ուսումնական տարում դասարանների կազմավորման համար:
16	Օգոստոսի 30-31-ը	Առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակի կազմում	Առաջիկա ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակը կազմվում և ուսուցիչներին է ներկայացվում մինչև ուսումնական պարապմունքների սկիզբը

17	Օգոստոսի 30-31-ը	Հանրակրթական դպրոցի դասարանների կազմավորում	<p>Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, տնօրենի հրամանով՝ պահպանելով ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության <a href="#">դասարանների կազմավորման կարգի</a> և ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունում <a href="#">քաղաքացիական կազմավորման կարգի</a> պահանջները:</p>
----	---------------------	--	---

			<p>Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում՝ <a href="#">ԴԿՏ (emis.am)</a> հաստատության կողմից սովորողների տվյալների մուտքագրման արդյունքում կատարվում է դասարանների ձևավորում:</p>
18	Օգոստոսի 31	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի տարեկան պլանի (ՈւԴԱԴ) հաստատում	<p>ՈւԴԱԴ-ը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է տնօրենը:</p>

19	Սեպտեմբերի 1-4-ը	Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում	Դասացուցակը հաստատվում է տնօրենի հրամանով: ԴԿՏ ( <a href="http://emis.am">emis.am</a> ) համակարգում դասացուցակի և դասաբաշխման վերաբերյալ տվյալների ներմուծման  արդյունքում ինքնաշխատ կերպով ձևավորվում են տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները:
20	Սեպտեմբերի 1-7-ը	Առանձին ուսումնական առարկաների թեմատիկ պլանի կազմում և հաստատում տնօրենի կողմից	Թեմատիկ (օրացուցային) պլանը կազմվում է առարկան դասավանդող ուսուցչի կողմից և մեթոդիավորման հավանությամբ ներկայացվում տնօրենի  հաստատմանը:
21	Սեպտեմբերի 1-7-ը	Դասարանների և հաստատության ծնողական խորհուրդների  ձևավորում:  Հաստատության ծնողական ժողովի անցկացում	Անցկացվում են դասարանական ծնողական ժողովներ, որոնց  կողմից ընտրված ծնողական խորհուրդների նախագահներից ձևավորվում է <a href="#">հաստատության ծնողական խորհուրդը</a> (տես՝ <a href="#">Օրինակելի կանոնադրություն, կետ 96- 100</a> ):  Անցկացվում է հաստատության (անհնարինության դեպքում՝ առանձին-առանձին՝ 1-4-րդ, 5- 8-րդ, 10-12-րդ դասարանների) ծնողական ժողով՝ տնօրենի մասնակցությամբ:


22	Սեպտեմբերի 1-8-ը	Սովորողների առաջին ընդհանուր ժողովի հրավիրում.  Աշակերտական խորհրդի  ձևավորման նախապատրաստում	Սովորողների առաջին ընդհանուր ժողովը հրավիրվում է տնօրենի կողմից:  <a href="#">Աշակերտական խորհուրդ</a>  ձևավորվում է հաստատության 6- 12-րդ (հիմնական դպրոցի համար` 6-9-րդ, ավագ դպրոցի համար` 10- 12-րդ) դասարանների դասարանական ժողովներում
----	---------------------	--	--

			փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու  ներկայացուցիչներից,  դասարանական ժողովներից հետո` 10-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը (տես` <a href="#">կանոնադրություն, կետ 27</a> ):
23	Սեպտեմբերի 1-15-ը	Ամենամյա ծախսերի նախահաշվի կազմում և ներկայացում  հաստատման	Այն կազմում է տնօրենը և հաստատության խորհրդի  հավանությամբ ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը:
24	Սեպտեմբերի 1-15-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի նախագծի և բյուջետային օրացույցի կազմում	Հաստատության բյուջեի  նախագիծը կազմում է տնօրենը և ներկայացնում խորհրդի  քննարկմանը:  Բյուջետային օրացույցը կազմվում է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության

			օրինակելի կանոնադրությամբ ամրագրված ժամանակացույցին համապատասխան:
25	Սեպտեմբերի 1-10-ը	Առաջին կիսամյակի դասացուցակի և դասաբաշխման, առարկայական թեմատիկ պլանների, սովորողների անձնական գործերի լրացում ԴԿՏ ( <a href="http://emis.am">emis.am</a> ) էլեկտրոնային համակարգում	Առաջին կիսամյակի դասացուցակի, առարկայական թեմատիկ պլանների հաստատումից և սովորողների համակազմի ձևավորումից հետո դասացուցակը, թեմատիկ պլանները, սովորողների անձնական գործերում ընդգրկված տվյալները լրացվում են ԴԿՏ ( <a href="http://emis.am">emis.am</a> ) էլեկտրոնային համակարգում: Կատարվում է նաև ուսուցիչների վերաբերյալ տվյալների փոփոխություն՝ առկայության դեպքում:

Կազմող՝ «ԿՉՆԱԿ» հիմնադրամի Ուսումնական հաստատության  
գարգացման կառավարման բաժնի մասնագետ  
Ա. Գյուլբուդաղյան  
31.05.2021 թ.

## Ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորում



Աշխատանքի բովանդակությունը		Կատարման ժամկետը	Պատասխանատու/ կատարող
1.	Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ	Շաբաթը մեկ անգամ (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Տնօրեն
2.	Նախապատրաստել դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նոր ուսումնական տարվան	Օգոստոս	Վարչական, մանկավարժական, ուսումնաօժանդակ աշխատողներ
3.	Աշխատանք տանել կաբինետները և դասարաններն անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ:	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ԾԽ
4.	Վերահսկել սանիտարահիգիենիկ վիճակը, անվտանգության տեխնիկայի ապահովումը	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, դպրոցի աշխատողներ, բուժքույր



5.	Կատարել աշխատանքի բաժանում	Ուսումնական տարվա սկիզբ	Տնօրեն
6.	Ապահովել գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը	Ուսումնական տարվա ընթացքում	Վարչական և մանկավարժական աշխատողներ
7.	Ուսումնասիրել աշակերտների շարժը և կազմել հաշվետվություն	Օգոստոս, 1-ին կիսամյակի ավարտ, 2-րդ կիսամյակի ավարտ	Տնօրեն, ՈՒԱԳՏ
8.	Կոմպլեկտավորել 1-ից 9-րդ դասարանները	Օգոստոս	Տնօրեն
9.	Նշանակել դասագրքերի ներդրումային գումարների հավաքագրման, դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների հատկացման և ուսումնական տարվա ավարտին դրանց հետ հավաքագրման աշխատանքների պատասխանատու	Օգոստոս	Տնօրեն
10	Կատարել դասագրքերի բաշխում՝ սահմանված ժամանակացույցով	Օգոստոս	Տնօրեն, գրադարանավար, դասղեկներ
11	Ձևավորել մեթոդական միավորումներ, Նշանակել մեթոդական միավորումների նախագահներ Հրավիրել առարկայական մեթոդական միավորումների նիստեր Մասնախմբերի նիստերին հանդես գալ մանկավարժական զեկույցով	Օգոստոս Ուսումնական տարվա ընթացքում առնվազն ամիսը մեկ անգամ	Տնօրեն, ՈՒԱԳՏ, մեթոդական միավորման նախագահներ, անդամներ,

	Ձևավորել 8–10 հոգուց կազմված մանկավարժական մենթորական աջակցման խումբ՝ ներառելով փորձառու և առաջադեմ մանկավարժների		
12	Գումարել մանկավարժական խորհրդի նիստեր (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Ուսումնական տարվա ընթացքում՝ օգոստոս ամսից սկսած՝ առնվազն 2 ամիսը մեկ անգամ	Տնօրեն, մանկավարժական խորհրդի անդամներ, լիազորված մարմին
13	Գումարել կառավարման խորհրդի նիստեր (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Ուսումնական տարվա ընթացքում՝ օգոստոս ամսից սկսած՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ	խորհրդի նախագահ, անդամներ, տնօրեն , լիազորված մարմին
14	Հրավիրել համադպրոցական ծնողական ընդհանուր ժողով	1-ին կիսամյակ, 2-րդ կիսամյակ (առնվազն 2 անգամ)	Տնօրեն, ծնողական խորհուրդ, ՄԿԱԳՏ
15	Հրավիրել ծնողական խորհրդի նիստ (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Սեպտեմբեր, ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, Ծն նախագահ
16	Յուրաքանչյուր դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ (բաղկացած 2-4 հոգուց), Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ Ապահովել ծնողական խորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացին Ապահովել ծնողական խորհրդի գործունեությունը՝ ըստ կանոնադրության	Սեպտեմբեր  Սեպտեմբեր  Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, դասղեկներ, ՄԿԱ գծով տեղակալ, ծնողներ

17	Հրավիրել համադպրոցական աշակերտական ընդհանուր ժողով (6-9-րդ դասարանների աշակերտներ)	Սեպտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, դաստեղներ, աշակերտներ
18	Հրավիրել աշակերտական խորհրդի նիստ (անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ)	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, ԱԽ նախագահ
19	Ապահովել աշակերտական խորհրդի գործունեությունը՝ ըստ կանոնադրության	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, ԱԽ նախագահ
20	Կառավարման, մանկավարժական, աշակերտական, ծնողական խորհուրդներում ներկայացնել 2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման արդյունքները	Օգոստոս- սեպտեմբերի սկիզբ  / մինչև 05.09.2023թ./	Տնօրեն
21	Ստեղծել ներքին գնահատման հանձնաժողով	Սեպտեմբեր	Տնօրեն
22	Ճանաչացնել աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանին  Իրականացնել գործնական պարապմունքներ	Սեպտեմբեր    Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, ՈԲԱԳՏ, ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, ՆԶՊ ուսուցիչ, դպրոցի աշխատողներ, աշակերտներ, ծնողներ
23	Ապահովել սովորողների սոցիալական պաշտպանվածությունը, կրթության	Ուսումնական տարվա ընթացքում	Վարչական և մանկավարժական աշխատողներ

	առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ստանալու իրավունքը		
